Հաստատված է

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի թիվ 18/08-30.07.2025թ. որոշմամբ

Ուժի մեջ է մտնում 11.08.2025թ.

Խորհրդի նախագահ

---------- Ս. Սուքիասյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ՌԻՍԿԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ԵՐԵՎԱՆ 2025

ՓԱՍՏԱԹՂԹԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ			
Հ/Հ	Որոշման/Հրամանի ամսաթիվ	Որոշման/Հրամանի համար	Փաստաթղթի նույնականացուցիչը
1	08.08.2023թ.	24/04-08.08.2023թ.	ISO/KG/A.7/044/08.08.2023/1
2	23.07.2024թ.	17/16-23.07.2024թ.	ISO/KG/A.7/044/23.07.2024/2
3	30.07.2025թ.	18/08-30.07.2025թ.	ISO/KG/A.7/044/30.07.2025/3

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կանոնակարգը սահմանում է «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) խորհրդին կից Ռիսկերի հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կազմն ու կառուցվածքը, խնդիրները, գործառույթները, գործունեության կազմակերպումն ու ընթացակարգը:

1.2. Հանձնաժողովը հանդիսանում է Բանկի խորհրդին կից խորհրդատվական մարմին, որը ստեղծվում է Բանկի Խորհրդի որոշմամբ:

1.3. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի, ՀՀ ԿԲ կողմից ընդունված որոշումների, Բանկի ներքին իրավական ակտերի և սույն կանոնակարգի, Բանկի կառավարման մարմինների կողմից ընդունված որոշումների պահանջներով:

2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

2.1. Հանձնաժողովի հիմնական խնդիրներն են՝

2.1.1. Բանկի ռիսկերի կառավարման գործառույթի իրականացման նկատմամբ հսկողության բարելավման (կատարելագործման) վերաբերյալ Բանկի խորհրդին առաջարկների տրամադրումը:

2.1.2. Բանկի ռիսկերի կառավարման համակարգի կատարելագործման վերաբերյալ առաջարկների քննարկումը:

2.1.3. Բանկի ռիսկերի կառավարմանը վերաբերող ներքին իրավական ակտերի քննարկումը:

2.2. Հանձնաժողովն իր խնդիրներին համապատասխան կատարում է հետևյալ գործառույթները.

2.2.1. Բանկի ռիսկերի կառավարման համակարգի ձևավորման, կենսագործունեության և շարունակական մոնիտորինգի արդյունավետության վերաբերյալ Բանկի խորհրդին խորհրդատվական բնույթի առաջարկների տրամադրումը:

2.2.2. Բանկի ռիսկերի կառավարման գործառույթի իրականացման նկատմամբ հսկողության բարելավման (կատարելագործման) վերաբերյալ Բանկի խորհրդին խորհրդատվական բնույթի առաջարկների տրամադրումը:

2.2.3. Բանկի ռիսկերի կառավարման համակարգի կատարելագործման վերաբերյալ առաջարկների քննարկումը և Բանկի խորհրդին խորհրդատվական բնույթի առաջարկների տրամադրումը:

2.2.4. Բանկի ռիսկերի կառավարման ստորաբաժանման կողմից ներկայացված ռիսկերի կառավարման վերաբերյալ հաշվետվությունների քննարկումը և Բանկի խորհրդին խորհրդատվական բնույթի առաջարկների տրամադրումը:

2.2.5. Բանկի ռիսկերի կառավարման ստորաբաժանման կողմից տրված բացասական եզրակացությունների վերաբերյալ ներկայացված հաշվետվության քննարկումը և Բանկի խորհրդին խորհրդատվական բնույթի առաջարկների տրամադրումը:

2.2.6. Բանկի ռիսկերի կառավարմանը վերաբերող ներքին իրավական ակտերի քննարկումը և Բանկի խորհրդին խորհրդատվական բնույթի առաջարկների տրամադրումը:

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

3.1. Հանձնաժողովը կազմված է բացառապես խորհրդի անդամներից:
3.2. Հանձնաժողովի կազմը հաստատվում է խորհրդի կողմից և չի կարող 4 հոգուց պակաս լինել: Հանձնաժողովն ունի հետևյալ կառուցվածքը՝ նախագահ, քարտուղար, որը ի պաշտոնե խորհրդի քարտուղարն է, և անդամներ:

4. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԸ

4.1. Հանձնաժողովի նախագահը՝ սեփական նախաձեռնությամբ, Հանձնաժողովի անդամի, Բանկի խորհրդի, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի գրավոր պահանջով գումարում է Հանձնաժողովի նիստերը:
4.2. Հանձնաժողովի նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության:
4.3. Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում նիստերը նախագահում է Հանձնաժողովի ամենատարեց անդամը:
4.4. Հանձնաժողովի անդամները կարող են նիստերին մասնակցել իրական ժամանակի ռեժիմում հեռախոսային կապի, հեռուստակապի կամ այլ հաղորդակցական սարքերի միջոցով, որոնց շնորհիվ նիստին մասնակցող բոլոր անձինք ի վիճակի կլինեն լսել միմյանց: Նման ձևով նիստին մասնակցելը կհամարվի նիստին անձամբ ներկայություն:
4.5. Հանձնաժողովի նիստերը իրավազոր են, եթե անդամների առնվազն կեսից ավելին մասնակցում են նիստին:
4.6. Նիստերի արձանագրությունները վարում է քարտուղարը կամ նրա կողմից նշանակված անձը:
4.7. Արձանագրությունները ստորագրվում են նիստի մասնակից Հանձնաժողովի բոլոր անդամների կողմից:
4.8. Հանձնաժողովի նիստերի արձանագրությունները պահվում են առանձին թղթապանակներում՝ Բանկի Խորհրդում:
4.9. Հանձնաժողովի նիստերին կարող են հրավիրվել Բանկի աշխատակիցներ կամ այլ անձինք: